ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



Տ. ՎԱՉԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

(11.06.1930–18.12.2022)

Դեկտեմբերի 18-ին, կեանքի 92-րդ տարում, ԱՄՆ-ում, ի Տէր հանգաւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նուիրեալ սպասաւոր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանութիւնը սգում են հոգելոյս Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի մահը եւ աղօթում նրա հոգու հանգստութեան համար:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանը (աւազանի անունը՝ Յովսէփ) ծնուել է 1930 թ. յունիսի 11-ին՝ Լիբանանի մայրաքաղաք Բէյրութում: Նախնական կրթութիւնը ստացել է տեղի Մեսրոպեան հայկական ազգային վարժարանում, որն աւարտելուց յետոյ ընդունուել է Անթիլիասի Դպրեվանք:

1951 թ. յունիսի 24-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլադեանի ձեռնադրուել է կուսակրօն քահանայ: Ձեռնադրութիւնից յետոյ պաշտօնավարել է Դպրեվանքում որպէս տեսուչի օգնական եւ դաստիարակ:

1953 թ. մեկնել է Շոտլանդիա ուսանելու Էդինբուրգի համալսարանում: Գործուն մասնակցութիւն է ունեցել Եկեղեցիների համաշխարհային

խորհրդի երիտասարդական շարժմանը՝ մասնակցելով մի շարք էկումենիկ համաժողովների։

1956 թ. նշանակուել է ԱՄՆ Նիւ Ջերսի նահանգի Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիւ։ Ուսումը շարունակել է Ռուտգերսի Նիւ Բրունսուիք աստուածաբանական ճեմարանում՝ ստանալով աստուածաբանութեան բակալաւրի աստիճան։

1967 թ. նշանակուել է Կանադայի թեմի առաջնորդական փոխանորդ, ստեղծել նոր ծխեր, պատրաստել Կանադայի հայոց թեմի կանոնադրութեան նախաշաւիղը՝ համապատասխանեցնելով Կանադայի կառավարութեան պահանջներին։

1967 թ. հոկտեմբերին, ձեռամբ երջանկայիշատակ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնադրուել է եպիսկոպոս։

1971 թ. մարտին ընտրուել է Հիւսիսային Ամերիկայի Հայոց արեւմտեան թեմի առաջնորդ՝ ծառայելով շուրջ 32 տարի, որի ընթացքում հաստատել է 13 նոր ծխեր։

1976 թ. ձեռնադրութեան 25-ամեակի առթիւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակով արժանացել է արքութեան պատուի։

1988 թ. աւերիչ երկրաշարժից յետոյ, ԱՄՆ Արեւմտեան թեմում հիմնել է որբերի օգնութեան հիմնադրամ։ Սրբազան Հօր անմիջական նախաձեռնութեամբ ԱՄՆ Արեւմտեան թեմը վերակառուցել է Ստեփանաւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ դպրոցը։ Իսկ Փասադենայում, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կից հիմնուել է «Ալֆրէդ եւ Մարգարիտ Յովսէփեան» ամենօրեայ հայկական վարժարանը։

1997 թ. Վաչէ Սրբազանը երջանկայիշատակ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի հրամանով նշանակուել է Հայ Եկեղեցու կանոնադրութեան պատրաստման յանձնախմբի նախագահ։ Կանոնադրութեան նախաշաւիղն աւարտին է հասցուել 2002 թ.։

2003 թ. Վաչէ Սրբազանը 32 տարուայ բեղուն առաջնորդական գործունէութիւնից յետոյ անցել է վաստակեալ հանգստի։

Սրբազան Հայրը հոգեւոր սպասաւորութեան ընթացքում արժանացել է բազում կոչումների եւ պարգեւների։